ԽՍՀՄ
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

# ԱԶԴԱՐԱՐՈՒՄԸ
# ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՅԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐՈՒՄ
# ՅԵՎ ՆՐԱ
# ՀՐԱՀԱՆԳԸ

656
Խ-11

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՆԴՐԿՈՎԿ. ՅԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԹԲԻԼԻՍԻ 1936

ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՅԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐՈՒՄ
հանձնված և օգտագործման

| Ազգը, անունը և հայրանունը | Աշխատանքի տեղը | Պաշտոնը | Հանձնման թիվը |
|---|---|---|---|
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

*Այս հրահանգը պետք է վերադարձնել հանձնող պետի պահանջով կամ յերբ աշխատավորը թողնում է իր ծառայությունը։*

*Արգելվում է Հրահանգի բնագրում վորեվե նշանակում կատարել։*

ԽՍՀՄ
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԺՈՂ. ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

# ԱԶԴԱՐԱՐՈՒՄԸ
## ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՅԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐՈՒՄ ՅԵՎ ՆՐԱ
# Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ը

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՆԴՐԿՈՎԿ. ՅԵՐԿԱԹՈՒՂ. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԹԲԻԼԻՍԻ 1936

…01. 2013
24.106
58366-67
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библ…
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясн…
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

Պատ. խմբագիր՝ ճարտարագետ Ա. Դ. Վարդանյան
Թարգմանիչ՝ դոցենտ Վ. Գալճայան
Տեխ. խմբագիր՝ Միրկովիչ

Ա. Յ. Մյասնիկյանի անվ. տպ., հրատ. «Զարյա Վոստոկա»-ի

Պատվեր 2966   Գլավլիտ 1։219   Քանակ 2000

Ամրապնդել աշխատավորի մեջ հարգանք դեպի ազդանշանը, հասնել այնպիսի վիճակի, որ յուրաքանչյուր ամեն մի աշխատավոր պարզորոշ գիտենա ազդարարման կանոնները — ահա կարևորագույն խնդիրը։

ԱԶԴԱՆՇԱՆԸ ՍՈՒՐԲ ԳՈՐԾ Է։ ՈՉ ՈՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ԽԱԽՏԵԼ։

Լ. ԿԱԳԱՆՈՎԻՉ

# ՔԱՂՎԱԾՔ

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻՑ (ՏՇԿ)

Ազդանշանի ցուցմունքը հրաման է և պետք է կատարվի առանց վորևէ առարկության: Երկաթգծի տրանսպորտի աշխատավորները բոլոր հնարավոր միջոցներով պետք է ապահովեն ազդանշանի պահանջների անհապաղ կատարումը:

Երկաթգծի տրանսպորտի ամեն մի աշխատավոր, վորը կապված է գնացքների շարժման հետ, պետք է հաստատ և պարզորեն գիտենա ազդարարման հրահանգը (ՏՇԿ § 280):

Երկաթուղու տրանսպորտի ամեն մի աշխատավոր պարտավոր է կանգնեցման ազդանշան տալ այն բոլոր դեպքերում, վորոնք պարզ կերպով սպառնում են գնացքների անվտանգ շարժմանը կամ թե մարդկանց կյանքին (ՏՇԿ § 465):

*Հաստատում եմ.*
*Հաղորդակցության ճանապարհների Ժողովրդական կոմիսարի տեղակալ՝* **Կոսսնիկով**
*Օգոստոսի 2-ին, 1936 թ.*

*Գլուխ 1.*

# ԼՈՒՍԱՖՈՐՆԵՐ, ՍԵՄԱՖՈՐՆԵՐ, ՍԿԱՎԱՌԱԿՆԵՐ ՅԵՎ ԱԶԴՍՏԻ. ՎԱՀԱՆՆԵՐ

## *ԼՈՒՍԱՖՈՐՆԵՐ*

*§ 1. Լուսաֆորները թե գիշերը և թե ցերեկը տալիս են գունավոր կրակներով ազդանշաններ.*

*ա) Յեթե լուսաֆորը ցույց ե տալիս միմիայն կանաչ կրակ, դա նշանակում ե՝ «Գիծն ազատ ե, անցիր վորոշված արագությամբ» (Նկ. 1).*

*բ) Միմիայն դեղին կրակ՝ «Հանդարտ. անցիր նվազեցրած արագությամբ, վորը հնարավորու-*



*Նկ. 1*

թյուն և տալիս կանգնել հաջորդ կարմիր ազդանշանի մոտ» (Նկ. 2).



Նկ. 2

գ) Յերկու դեղին կրակ՝ «Հանդարտ, անցիր նվազեցրած արագությամբ և հատուկ զգաստությամբ» (Նկ. 3).



Նկ. 3



դ) Միմիայն կարմիր կրակ՝ «Կանգ առ» (Նկ. 4)։



Նկ. 4

§ 2. Յերկարաձիգ վերելքում զետեղված անցույթի լուսաֆորի վրա դրվում է կապույտ կրակով լրացուցիչ գլխիկ կամ T տառի ձևով արտացոլող նշան։ Այս կապույտ կրակը կամ նշանը թույլատրում է ծանրաբեռ ապրանքային գնացքներին կարմիր կրակով լուսաֆորն ընթանալ ժամը 15 կմ-ից ոչ բարձր արագությամբ, որի շնորհիվ գնացքը կարող է կանգ առնել ամեն մի մոմենտ, յեթե հետագա շարժման ընթացքում կհանդիպի արգելքների (Նկ. 5)։



Նկ. 5

## § 3. Հրավիրական ազդանշան

Յերբ փչանալու պատճառով անհնարին է լինում բացել մուտքի լուսաֆորը, ապա գնացքը չպահելու համար, ուղեկցող ուղարկելու տեղ՝ թույլատրվում է լուսաֆորի հիմնական հանգած կրակներով կամ լուսաֆորի կարմիր կրակով հրավիրական ազդանշան տալ, որի համար յելքի լուսաֆորի կայմի վրա ցույց է տրվում մի հատ ճերմակ լուսնե գույնի կրակ, որն իրավունք է տալիս գնացքին ժամը 15 կմ-ից ոչ բարձր արագությամբ մուտք գործել կայարան (Նկ. 6)։



Նկ. 6

## § 4. Նորմալ լուսաֆորների փոխարեն կարող են գործադրվել նաև գաճաճ լուսաֆորներ, որոնք տալիս են սովորական լուսաֆորների ցուցմունքները (Նկ. 7)։



Նկ. 7



## § 5. Քեբ-ազդանշաններ

Քեբ-ազդանշանները դրվում են լոկոմոտիվների վրա և ազդարարում են նույն հիմնական գունավոր կրակներով, նույն կարգով, ինչպես և ավ-



Նկ. 8

տոուղեկապակցման նորմալ տիպի լուսաֆորները (8-րդ նկ.)։ Գնացքը կանգնույթի տեղին մոտե-

նալիս, քեր-ազդանշանը ցույց է տալիս կարմիր կրակ՝ կապույտ շերտով, իսկ այն դեպքում, յերբ գնացքն անցնում է այնտեղով, ուր անպայման նա պետք է կանգնույթ ունենա, բռնկում է միմիայն մի կարմիր կրակ։

§ 6. Լուսաֆորները իրենց ցուցմունքը տալիս են ավտոմատիկորեն, նայելով, թե ազատ է գծի առջևը գտնվող ուղեմասը, թե՞ զբաղեցրած է, ըստ որում լուսաֆորի ավտոմատիկ ցուցմունքը կախված է նաև գծի սարքին վիճակից։ Կայարանի հերթապահը, անջատական կետերում գտնվող մուտքի ու յելքի լուսաֆորներով ձեռքի օգնությամբ ևս կարող է արգելող ցուցմունքներ տալ։

Ցերեկով



Գիշերով



Նկ 9



## ՍԵՄԱՖՈՐՆԵՐ

§ 7. Յերբ սեմաֆորի թևը ցերեկը բարձրացված է 135°-ի անկյունով, իսկ գիշերը սեմաֆորն ունի մի կանաչ կրակ, ապա նա ցույց է տալիս «գիծն ազատ է» ազդանշանը (նկ. 9)։

Սեմաֆորի թևի հորիզոնական դիրքը, իսկ գիշերով նրա կայմի վրա մի կարմիր կրակ՝ սեմաֆորը ցույց է տալիս «կանգ առ» ազդանշանը (նկ. 10)։

Գիշերով



Ցերեկով



Նկ. 10

§ 8. Վորպեսզի ցույց տրվի գնացքին, վոր նա կողքի կամ ճյուղավորման գիծն ընթանալիս պետք է արագությունը նվազեցնի, սեմաֆորին կցվում են լրացուցիչ թևեր։ Այս թ.երը փակ վի-

ճակում ընտեղված են լինում կայմի յերկայնքով, իսկ ազդանշանային կրակները, ծածկված են լինում վահանիկներով և մոտեցող գնացքի կողմից չեն յերևում։

Բաց վիճակում լրացուցիչ թևերը թեքված են կայմին 135°-ի անկյունով և գիշերը լույս են տալիս դեղին կրակներով, վորոնց թիվը համապատասխանում է լրացուցիչ բացված թևերի քանակին։

Ցերեկով



Գիշերով



Նկ. 11

Սեմաֆորը յերկրորդ թևով ցուցմունք է տալիս, թե գնացքը ընդունվում է կողքի գիծը և կամ մեկում է ճյուղավորման գիծը (յեթե գնացքը յերթի համար ունի յերկու ուղղություն)



և ցույց է տալիս՝ «Հանդարտ, անցիր նվազեցրած արագությամբ և հատուկ զգաստությամբ» (Նկ. 11)։

Յելքի սեմաֆորի մոտ գնացքը իր նվազեցրած արագությունը պահպանում է այնքան, մինչև վոր նա դուրս է գալիս վազուրդ տանող սլաքից։

§ 9. Յեթե կան 3 կամ ավելի ուղղություններ, գործադրվում են յերեք թևի սեմաֆորներ կամ միաթև սեմաֆորների ուղղության ցուցիչներ (ինդիկատորներ)։ Յերրորդ թևը ազդարարում է նույն կրակներով, ինչ վոր յերկրորդ թևը։

§ 10. Կայարանների կողմից գիշերով մուտքի սեմաֆորների թևերի դիրքը հսկելու համար ծառայում են հսկիչ կրակները։ Յերբ սեմաֆորը բաց դիրքով է, ապա կայարանի կողմից յերևում է սպիտակ, խաչաձև հսկիչ կրակ, իսկ փակ դիրքով—սպիտակ ու կլոր կրակ։

## ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՍԿԱՎԱՌԱԿՆԵՐ, ՄԻՋԱՆՑՈՒՅԹԱՅԻՆ ՍԿԱՎԱՌԱԿՆԵՐ ՅԵՎ ԱԶԴԱՏՈՒ ՎԱՀԱՆՆԵՐ

§ 11. Նախազգուշական սկավառակը ցույց է տալիս սեմաֆորի թևի դիրքը, վորի հետ նա կապված է։

Նախազգուշական սկավառակը ազդարարում է.

ա) Մուտքի սեմաֆորը բաց է—կանխազգուշական սկավառակը բաց է։ Գնացքի կողմից յե-

րևում են. ցերեկով՝ սկավառակի կողը, գիշերով՝ կանաչ կրակ (Նկ. 12)։

Ցերեկով



Գիշերով



Նկ 12



բ) Մուտքի սեմաֆորը փակ է—կանխազգուշացման սկավառակը փակ է: Գնացքի կողմից յերևում են. ցերեկով — դեղին գույնով ներկված սկավառակ, գիշերով՝ դեղին կրակ (Նկ. 13)։

Ցերեկով



Գիշերով



5836-67

ՀՍՍՌ-Арм ССР

§ **12.** *Մուտքի սեմաֆորի կայմին զետեղված յելքի սեմաֆորի կանխազգուշական սկավառակը*

*Ցերեկով*



*Գիշերով*



*Նկ. 14*



*կոչվում ե միջանցույթային* (диск сквозного прохода) *սկավառակ։*

*Միջանցույթի սկավառակը ազդարարում ե.*

*Ցերեկով*



*Գիշերով*



*Նկ. 15*

ա) Գնացքը կայարանում թողարկվում է առանց կացույթի (безостановки), մուտքի ու ելքի բաց սեմաֆորների դեպքում դեպի գնացքի կողմը ցերեկով յերևում է սկավառակի կողը, իսկ գիշերով—կանաչ կրակ (Նկ. 14)։

բ) «Հանդարտ, ելքի սեմաֆորը փակ է, սկավառակը փակ է»։ Գնացքին ցերեկով յերևում է դեղին սկավառակ, գիշերով — դեղին կրակ (Նկ. 15)։

§ 13 Կանխազգուշացման սկավառակի և միջանցույթի սկավառակի հսկիչ կրակները դեպի կայարանի կողմը ցույց են տալիս՝ յերբ սկավառակը բաց է խաչաձեվ սպիտակ կրակ, իսկ յերբ սկավառակը փակ է կլոր, սպիտակ կրակ։



Նկ. 16



Սեմաֆորն ու սկավառակները ղեկավարում են կայարանի և բլոկ-պոստի հերթապահները կամ կայարանի հերթապահի հրամանով հերթապահ ազդարարը կամ սլաքավարը։ Ուրիշ վոչ մի աշխատավոր իրավունք չունի ղեկավարել սեմաֆորներն ու սկավառակները։

Սեմաֆորների ու սկավառակների բացումը յուրաքանչյուր անգամ կատարվում է կամ կայարանի հերթապահի միջոցով կամ նրա կարգադրությամբ։ Սեմաֆորների փակումը, յերբ կան գնացքի անցույթը հսկող հատուկ պարագաներ, կատարվում է ավտոմատիկորեն, իսկ մյուս դեպքերում նույն կարգով, ինչ կարգով վոր կատարվում է բացումը։

§ 14. Ազդատու վահանները մեքենավարին ցույց են տալիս, վոր գնացքը մոտենում է ազդանշանին (16, 17, 18 նկարները)։

## ՓՉԱՑԱԾ ԼՈՒՍԱՖՈՐԻ, ՍԵՄԱՖՈՐԻ ՅԵՎ ԿԱՆԽԱԶԳՈՒՇԱՑՄԱՆ ՍԿԱՎԱՌԱԿԻ ՊԱՏՍՊԱՐՈՒՄԸ

§ 15. Յերբ գծում փչանում է ռելսերի միջի մուտքի լուսաֆորը, այս լուսաֆորի դեմը դըրվում է առանձին աշխատավորի միջոցով պաշտպանվող կանգնույթի տեղափոխիկ ազդանշան։ Գնացքները այս դեպքում կայարան են ընդուն-



Նկ. 17



Նկ. 18

վում հրավիրական ազդանշանով կամ ուղեկցողով։

Սեմաֆորը փչանալիս, երբ նա տալիս է ազ-



դանշանի սխալ ցուցմունք, ապա նրա թևին տրվում է փակ դրություն—գիշերով, ինչպես և ցերեկով վատ յեղանակին՝ (մառախուղ, մրրիկ, հեղեղ, թանձր ձյունաթափ), սեմաֆորի լապտերը պետք է վառված լինի և վագոնրդի կողմը ցույց տա կարմիր կրակ։

Գնացքները կայարան են ընդունվում ուղեկցողով։

§ 16. Յեթե փչացած մուտքի կամ անցույթի սեմաֆորին անհնարին է փակ դրություն տալ, ապա նրա լապտերը չպետք է լույս տա և նրա դեմը գծում դրվում է հատուկ աշխատավորի կողմից պահպանող տեղափոխիկ կանգնույթի ազդանշան։

Յերբ յերևան են բերում մուտքի կամ անցույթի այնպիսի սեմաֆորի փչացում, վորը բաց դրության մեջ է մնացել այնպիսի ժամանակ, յերբ վագոնրդում ընթանում է փչացման մասին կանխազգուշացում չունեցող գնացք, ապա կանգնույթի տեղափոխիկ ազդանշանին իբրև լրացում, սեմաֆորից սկսած, արգելակման տարածության չափով՝ զետեղում են ճայթուկներ, բայց այն դեպքում միայն, յեթե գնացքը առանց սեմաֆորի մոտ կանգնելու չի կարող կայարան ընդունվել։

§ 17. Նախազգուշական փչացած սկավառակը պետք է անջատվի սեմաֆորից, փակվի և գիշե-

քով լուսավորվի։ Յեթե սկավառակն ունի անջատում չթույլատրող հորինվածք, ապա փակվում են յերկու ազդանշան ևս, այսինքն՝ սկավառակն ու սեմաֆորը մինչև նրանց նորոգելը՝ գնացքները կայարան են ընդունվում ուղեկցողով։

## ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՍԿԱՎԱՌԱԿՆԵՐ

§ 18. Արագությունը նվազեցնելու մշտական սկավառակներով տրվում են հետևյալ ազդանշանները.

«Նվազեցրու գնացքի արագությունը ճանապարհի հրամանի մեջ ցույց տված չափով»—ցերեկը յերևում է դեղին սկավառակը, գիշերը դեղին կրակ (Նկ. 19)։




Նկ. 19



Սկավառակի մյուս յերեսը (ցերեկով կանաչ սկավառակ, գիշերով կանաչ կրակ) ցույց է տալիս գծի ուղեմասի այն ծայրը, ուր պահանջվում է նվազեցնել գնացքի արագությունը (միուղի գծամասում մեքենավարը տեսնում է գծի ձախ կողմից սկավառակի մյուս յերեսը (Նկ. 20)։



Նկ. 20




Նկ. 21. Արագությունը նվազեցնող մշտական սկավառակների զետեղման սխեման միուղի գծամասում։




Նկ. 22։ Արագությունը նվազեցնող մշտական սկավառակների զետեղման սխեման յերկուղի գծամասի գծերից մեկում։




Նկ. 23. Արագությունը նվազեցնող սկավառակների զետեղման սխեման յերկուղի գծամասի յերկուղի գծում եա։

§ 19. Արագությունը նվազեցնող մշտական սկավառակները զետեղվում են այն կարգով, վորը ցույց է տրվում 21, 22 և 23 սխեմաներում։



## ՉԳՈՐԾՈՂ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐԻ ՆՇՈՒՄԸ

§ 20. Չգործող լուսաֆորները, սեմաֆորները ու սկավառակները պետք է ունենան փակ դիրք



Նկ. 24



Նկ. 25



Նկ. 26

և խաչավորված լինեն յերկու ձողով (24. 25 և 26 նկարները)։ Չգործող ազդանշանները չեն լուսավորվում։

## Գլուխ 2.

## ՏԵՂԱՓՈԽԻԿ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐ

§ 21. Իբրև տեղափոխիկ ազդանշաններ՝ ծառայում են յերկու կողմից ևս կարմիր գույնով ներկված վահաններ, այնպիսի վահաններ, վորոնք մի կողմից ներկված են դեղին, իսկ մյուսից՝ կանաչ գույնով։ Ձողով լապտերներ, կարմիր, դեղին, կանաչ կրակներով։ Ձողերով կարմիր և դեղին դրոշակներ։

§ 22. Տեղափոխիկ ազդանշաններով տրվում են հետևյալ ազդանշանները.

ա) Ցերեկը՝ ձողով կարմիր վահան կամ կարմիր դրոշակ. Գիշերը ձող ունեցող կարմիր կրակով լապտեր՝—«կանգ առ» (Նկ. 27)։

Ցերեկով Գիշերով



Նկ. 27



բ) Ցերեկը ձողով դեղին սկավառակ կամ դեղին դրոշակ։ Գիշերը ձողով լապտերի դեղին կրակ,—«հանդարտ», անցիր կանխազգուշացման մեծ ցույց տված արագությամբ, իսկ յեթե կանխազգուշացում չկա—ժամը 25 կլմ-ից վոչ բարձր արագությամբ (Նկ. 28)։

Ցերեկով Գիշերով Ցերեկով Գիշերով



Նկ. 28



Նկ. 29
Հակառակ յերեսը։

Դեղին սկավառակի հակառակ յերեսը (ցերեկով կանաչ սկավառակ և կանաչ կրակ՝ գիշերով) ցույց է տալիս պատսպարված գծամասի վերջը (մուղի գծամասում մեքենավարը տեսնում է գծի ձախ կողմից հակառակ յերեսը (Նկ. 29)։

§ 23. Արագություն նվազեցնող տեղափոխիկ ազդանշանները զետեղվում են այն կարգով, վո-

է ցույց է տրվում մշտական ազդանշաններ համար 21, 22 և 23 նկարներով։

## ԳՆԱՑՔՆԵՐԻ ՇԱՐԺՄԱՆԸ ԱՐԳԵԼՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԵՂԵՐԻ ՊԱՏՍՊԱՐՈՒՄԸ

§ 24. Վազուղում գնացքների շարժումը խափանող, ինչպես և կայարանների սահմաններում գծի վրա գտնվող ամեն մի արգելք պետք է պատսպարվի կանգնույթի ազդանշաններով, անկախ նրանից, գնացք սպասվում է թե ոչ։

Վազուղու վրայի արգելքը պատսպարվում է 30, 31 և 32 նկարներում ցույց տված կարգով։ Սխեմաներում տարածությունը ցույց է տրվում (մետրերով)։




Նկ. 30. Արգելքների պատսպարման սխեման միուղի գծամասում։

Բացի 30, 31 և 32-րդ նկարներում ցույց տրված ազդանշաններից, հենց արգելքի տեղում, դրվում է կարմիր ազդանշան։






Նկ՛ 31. Արգելքի պատսպարման սխեման յերկուղի գծամասի գծերից մեկում։




Նկ. 32. Արգելքի պատսպարման սխեման յերկուղի գծամասի գծերից մեկում։

Միուղի գծամասերում ազդանշանները դրվում են առաջին հերթին թեքվածքի կողմից, հրապարակում—բոլորման (կորույթների) կամ հանույթի (выемка) կողմից, իսկ յերկուղի գծամասերում՝ սպասվող գնացքի կողմից։

§ 25. Ճանապարհի այն մասերը, վորոնցով գնացքները կարող են անցնել միմիայն ուղեկ-

ցողով (ժամը 15 կմ-ից պակաս արագությամբ), ինչպես և ճանապարհի յերկուղի գծամասում գըծերի հյուսը (сплетение) պատսպարվում են իրրև շարժման համար արգելք ներկայացնող տեղեր, բայց առանց ճայթուցիկների (30, 31 և 32 նկարները)։

Այս ազդանշանները զետեղելու մասին գնացքներին գրավոր կանխազգուշացում է տրվում։ Յեթե կարիք է լինում գնացքն թողարկել ուղեկցողով, վորին կանխազգուշացում չի տրված, ճայթուցիկների (петарды) զետեղումն անհրաժեշտ է։

§ 26. Ճայթուցիկները (գործադրման բոլոր դեպքերում) զետեղվում են 3 հատից վոչ ավելի, վորոնցից յերկուսը գծի աջ ռելսում ըստ գնացքի յերթի, իսկ մեկը ձախից. յերկուսի մեջտեղում։

Ճայթուցիկների միջև տարածությունը պետք է լինի 20-ական մետր։

§ 27. Կայարանային գծերում, յերբ կարիք է լինում պատսպարել վտանգավոր տեղը, ապա դեպի այդ տեղը տանող բոլոր սլաքներին տրվում է այնպիսի դիրք, վորպեսզի այդ գծին չմոտենա վոչ մի շարժակազմ։ Սլաքները կողպում են կամ կարում։

Վտանգավոր տեղում դրվում է կարմիր ազդանշան։ Յեթե այս սլաքներից վորևե մեկի լեզվակըն իր սայրով ուղղված է դեպի վտանգավոր



տեղը և թույլ չի տալիս գիծն մեկուսել, ապա յուրաքանչյուր այդպիսի սլաքի սայրերի մեջ դրվում է կանգնույթի ազդանշան։

Յերբ անհրաժեշտ է պատսպարել վտանգավոր տեղը, ապա սլաքի վրա ազդանշանները զետեղվում են սլաքին կցվող գծերի յերկու կողմից ևս, բայց 50 մ-ից վոչ ավելի մերձ։

Յեթե մուտքի սլաք է, ապա վազուրդի կողմից տեղափոխիկ ազդանշան չի դրվում և սլաքը պատսպարվում է մուտքի փակ յելքի սեմաֆորով կամ լուսաֆորով։

Յեթե վտանգավոր տեղը գտնվում է մուտքի սլաքի և մուտքի ազդանշանի մեջ, ապա վազուրդի կողմից այդ տեղը պատսպարվում է մուտքի փակ ազդանշանով, իսկ կայարանի կողմից՝ մուտքի սլաքի սայրերի (остряки) մեջ գտնվող կանգնույթի ազդանշանով։

Մուտքի ազդանշանից դուրս գտնվող վտանգավոր տեղը վազուրդի կողմից պատսպարվում է այնպես, ինչպես և վազուրդում, իսկ կայարանի կողմից՝ նույն տեղում մուտքի ազդանշանի դիմացը զետեղվող կանգնույթի ազդանշանով։

§ 28. Յերբ կայարանում գնացքը կանգ է առնում այնպիսի տեղում, վորով արգելվում է շարժակազմերի անցույթը դեպի կայարանի հարևան գծերը, ապա անհրաժեշտ է կանգնույթի ազդանշաններով պատսպարել այն բոլոր գծերի յելքը,

վորտեղից այլ գնացքներ կողքի գծից կարող են վրակախել կանգնած գնացքը։

§ 29. Յեթե կայարանային գծում գտնվում է անգաբարիտ բեռնով գնացք, ապա հարևան գըծերը պետք է պատսպարվեն կանգնույթի ազդանշաններով։

## ՇԱՐԺԱԿԱԶՄԻ ՊԱՏՍՊԱՐՈՒՄԸ ԿԱՅԱՐԱՆԱՅԻՆ ԳԾԵՐՈՒՄ

§ 30. Վագոնները նորոգելիս կամ կայարանում պայթուցիկ ու թունավոր նյութերով, խըտացած գազերով բարձած վագոններ գտնվելիս, —դրանք բոլորն էլ նույն գծում, շարժակազմի յերկու ծայրերից ևս պատսպարվում են 50 մ. տարածությամբ՝ կանգնույթի տեղափոխիկ ազդանշաններով։ Յեթե կազմի ծայրը գտնվում է սահմանային սյունիկից 50 մ-ից ավելի փոքր հեռավորության վրա, ապա տեղափոխիկ ազդանշանները դրվում են սահմանային սյունիկի մոտ։

## ԳՆԱՑՔԻ ՊԱՏՍՊԱՐՈՒՄԸ ՎԱԶՈՒՐԴՈՒՄ ՍՏԻՊՈՂԱԿԱՆ ԿԱՆԳՆՈՒՅԹԻ ԴԵՊՔՈՒՄ

§ 31. Վազուրդում կանգ առած գնացքները, վորոնց թվում նաև տնտեսական գնացքները, պատսպարվում են այն կարգով, վորը ցույց է տրված 33-րդ նկարում։






Նկ. 33. Գնացքի պատսպարումը վազուրդում կանգնելիս։

§ 31. Գնացքը կանգ առնելիս, վորի հետևից ընդյերթ նշանակված է այլ գնացքի առաքում, կանգնույթի բոլոր դեպքերում անհապաղ պատսպարվում է պոչից։ Յեթե գնացքը կանգ է առել ճանապարհի յերկուղի գծամասում ռելսերից դուրս գալու, ընդհարման պատճառով և այլն և գրավել է հարևան գիծը, անհրաժեշտ է անհապաղ հարևան գծի զբաղեցրած տեղը պատսպարել և առաջին հերթին ուղիղ գծով սպասվող գնացքի կողմից, իսկ հետո պատսպարվում է այն գիծը, ուր կանգ է առել գնացքը։

Կանգնած գնացքը գլխի կողմից պատսպարվում է գլխավոր կոնդուկտորի կարգադրությամբ ջոկատի աշխատավորների մեկի, կոնդուկտորի գնացքային վագոնի վարպետի, ուղեկցողի, հնոցապանի, մեքենավարի ոգնականի միջոցով, հետևյալ դեպքերում.

ա) Գնացքը վազուրդում թանձր մառախուղի, ձյունի, բուքի և անձրևի ժամանակ կանգնելիս,

ինչպես և այն դեպքում, յերբ պահանջվում ե ոժանդակ գնացք կամ լոկոմոտիվ։

բ) Յերկուղի գծամասում վոչ ուղիղ գծով ընթացող գնացքը կանգ առնելիս։ Գնացքը վաղուրդում կանգնելիս և նրա կազմը մաս-առ-մաս կայարան բերելիս, վաղուրդում մնացած նրա մասը պոչից պաշտպանվում ե սովորական կարգով, իսկ գլխի կողմից՝ 300 մ. տարածությամբ։ Յերբ այլես պաշտպանման կարիք չի լինում, մեքենավարը գլխավոր կոնդուկտորի կարգադրությամբ յերկար սուլոցով յետ ե կանչում գնացքը պաշտպանող աշխատավորներին։ Աշխատավորները ներկայանալուց և պոչի ազդանշանները նորմալ դիրքի մեջ դնելուց հետո, գլխավոր կոնդուկտորը տալիս ե մեկնելու ազդանշան։

Ավտո-ուղեկապակցումով գծամասերում գնացքը պաշտպանվում ե այն դեպքում, յերբ ավտո-ուղեկապակցումը չի գործում (այսինքն, յերբ գնացքըն ընթանում ե գրավոր թույլտվությամբ), կամ յերբ կանգնույթից հետո գլխավոր կոնդուկտորը կտեսնի, վոր լուսաֆորների կրակները հանգել են։

Պոչի արգելակավոր վագոնը սպասարկող կոնդուկտորը, պաշտպանումը հանելով և վերադառնալով դեպի գնացքը, պետք ե վաղուրդի կողմը ցույց տա ցերեկով բացված կարմիր դրոշակը, իսկ գիշերով ձեռքի լապտերի կարմիր կրակ։



Գլուխ 3.

## ՁԵՌՔԻ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐ

**§ 32.** Ձեռքի ազդանշաններով պահանջվում ե.

ա) Կարմիր բաց դրոշակով—ցերեկը. ձեռքի լապտերի կարմիր կրակով գիշերը՝ «կանգ առ» (Նկ. 34)։

Ցերեկով Գիշերով



Նկ. 34

Յեթե ցերեկը կարմիր դրոշակ չկա, իսկ գիշերը կարմիր կրակով ձեռքի լապտեր, տրվում են հետեյալ ազդանշանները։ Ցերեկը ձեռքի. կամ դեղին դրոշակը կամ վորեվե իր շրջանաձեվ շար-

ժելով, գիշերը՝ դեղին կամ սպիտակ կրակով լապտերը նույնպես շրջանաձև շարժելով (Նկ. 35)։

Գիշերով Ցերեկով



Նկ. 35



բ) Դեղին բաց դրոշակով՝ ցերեկը և ձեռքի լապտերի դեղին կրակով՝ գիշերը «հանդարտ անցիր» կանխազգուշացման մեջ ցույց տված արագությամբ, իսկ յեթե կանխազգուշացում չկա, ժամը 25 կմ-ից վոչ բարձր արագությամբ (Նկ. 36)։

Ցերեկով Գիշերով



Նկ. 36

Եթե ցերեկով դեղին դրոշակ չկա, իսկ գիշերով դեղին կրակով լապտեր, տրվում են հետեվյալ ազդանշանները.

Ցերեկով ձեռք կամ վորեվե իր դանդաղ վերեվ ու ներքեվ ճոճելով, գիշերը՝ լապտերի սպիտակ կրակ ճոճելով (Նկ. 37)։

Ցերեկով Գիշերով



Նկ. 37

§ 33. Ավտոմատիկ արգելակները ստուգելիս՝ տրվում են հետեվյալ նշանները.

ա) Մեքենավարից պահանջվում է, բերանացի կանխազգուշացումից հետո, կատարել փորձնական արգելակում ցերեկը՝ ձեռքի բարձրացումով գլխի վրա, իսկ գիշերը՝ սպիտակ կրակով ձեռքի լապտերի նույն ձևի բարձրացումով (Նկ. 38)։

Ցերեկով Գիշերով



Նկ. 38

Մեքենավարը պատասխանում է մի կարճ սուլոցով և սկսում է արգելակել.

բ) Մեքենավարից պահանջվում է արգելակները բացել. ցերեկով՝ ձեռքի շարժումով իր առաջ այս ու այն կողմը, իսկ գիշերը՝ սպիտակ կրակով լապտերի նույն ձևի շարժումով (Նկ. 39)։

Ցերեկով Գիշերով



Նկ. 39

Մեքենավարը պատասխանում է յերկու կարճ սուլոցով և բաց է թողնում արգելակները։

§ 34. «Գնացքը կարող է մեկնել» ազդանշանը տալիս է կայարանի հերթապահը. ցերեկը նա ուղղահայաց կերպով թեվձիգ բարձրացնում է



ծալած դեղին դրոշակը, գիշերը՝ նույն ձևով բարձրացնում է սպիտակ կրակով ձեռքի լապտերը (Նկ. 40)։

Ցերեկով Գիշերով



Նկ 40

§ 35. Յերբ գնացքը կայարանով անցնում է առանց կանգնույթի, կայարանի հերթապահը ցույց է տալիս – ցերեկով ծալած դեղին դրոշակ, իսկ գիշերով՝ ձեռքի լապտերի սպիտակ կրակ (Նկ. 40)։

Չվացուցակով կանգնույթ չունեցող գնացքը կայարանում կանգնեցնելու համար կայարանի հերթապահը ցույց է տալիս՝ ցերեկը կարմիր բաց դրոշակ, իսկ գիշերը՝ ձեռքի լապտերի կարմիր կրակ (Նկ. 34)։

Չվացուցակով կանգնույթ ունեցող գնացքին կայարանի հերթապահը հանդիպում է առանց կանգնույթի ազդանշան ցույց տալու, բայց իր մոտ պետք է ունենա ձեռքի ազդանշաններ։

§ 36. Կանգնույթի ազդանշանը գնացքից տրըվում է՝ ցերեկը կարմիր, բաց դրոշակով, գիշերը՝ ձեռքի ազդանշանային լապտերի կարմիր կրակով, որոնք ցույց են տրվում տանող լոկոմոտիվի մեքենավարին։

§ 37. Գնացքը կայարանով ընթանալիս, պոչի վագոնի կոնդուկտորը, մուտքի սլաքներից մինչև ելքի սլաքները, կայարանի հերթապահի կողմը, իսկ սրահն ընդունվելիս կամ սրահից ուղարկվելիս—շարժման ուղղության աջ կողմից՝ պետք է ցույց տա՝ ցերեկը ծալած դեղին դրոշակ իսկ գիշերը սպիտակ կրակով լապտեր։ Սրանք ցույց են տալիս, որ գնացքի պոչն իր տեղն է և գնացքի յերթը բարեհաջող է։

§ 38. Սլաքավարներն ու ազդարարները գնացքներին հանդիպում են՝ ցերեկը ծալած դեղին դրոշակով, իսկ գիշերը՝ ձեռքի լապտերի սպիտակ կրակով։

§ 39. Գծի շրջագայողները և գծանցային պահակները, յերբ գիծն ազատ է, վագուրդներում գնացքին հանդիպում են գնացքի յերթի աջ կողմից, ցերեկը ծալած դեղին դրոշակով, իսկ գիշերը՝ ձեռքի լապտերի սպիտակ կրակով։ Կանգ-



նույթի կամ արագությունը նվազեցնող ազդանշաններով պաշտպանված տեղերում, նրանք (թե գիշերով և թե ցերեկով) գնացքը դիմավորում են գծում համապատասխան կերպով զետեղված ազդանշաններով։

## Գլուխ 4.

# ՑՈՒՑԻՉՆԵՐ

## ԳՆԱՑՔԻ ՅԵՐԹԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ

§ 40. Այն դեպքերում, յերբ անհրաժեշտ է ցույց տալ գնացքի կամ մանյովրային կազմի յերթի ուղղությունը, գործադրվում են տառային կամ թվային լուսող ցուցիչներ (ինդիկատորներ), որոնք զետեղված են լինում սեմաֆորների, լուսաֆորների կայմերի և կամ թե առանձին կայմերի վրա (Նկ. 41)։




Նկ. 41

Նույն ցուցիչները կարող են զետեղված լինել մի քանի գծերի յելքի լուսաֆորների և սեմաֆորների ընդհանուր կայմերի վրա, վորպեսզի ցույց տրվի այն գծի համարը, վորից թույլատրված է գնացքի մեկնումը դեպի վազուղի։ Այս դեպքում ցուցիչի (ինդիկատորի) ճրագներում պետք է լինեն սպիտակ կրակի փոխարեն կանաչ կրակ։

Ցերեկով և գիշերով



Նկ 42

## ՍԼԱՔԱՅԻՆ ՑՈՒՑԻՉՆԵՐ

§ 41. Մենավոր (одиночные) սլաքների սլաքային ցուցիչները ցույց են տալիս.

ա) Վոր սլաքը շարժման համար զետեղված է ուղիղ գծով. ցերեկը յերկու կողմից էլ յերևում



է ցուցիչի նեղ կողմից սպիտակ քառանկյունի, գիշերով՝ սպիտակ կաթնագույն կրակ (Նկ. 42)։

բ) Սլաքը դրված է դեպի թեքված գիծը՝ խավով (по шерсти), կամ խավին հակառակ (против шерсти), ցերեկով յերևում է ցուցիչի լայն կողմը, գիշերով՝ դեղին կրակ (Նկ. 43)։

Ցերեկով և գիշերով



Նկ. 43

§ 42. Խաչաձև (անգլիական) սլաքների դիրքը ցույց է տրվում փոխադարձաբար իրար վրա դրված (սպիտակ գույնի) քառանկյունի հանույթներով (вырезы), վորոնք յերևում են ցուցիչի լայն կողմից և ցույց են տալիս.

ա) Յեթե սլաքը դրված է ուղիղ գծով, ձախից դեպի աջ շարժվելու համար, ապա յերևում է ցուցիչի քառակուսի կողմում սպիտակ կաթնագույն ձախից դեպի աջ թեքված ներքնագիծ (Նկ. 44)։

Ցերեկով և գիշերով



Նկ. 44



Ցերեկով և գիշերով

բ) Սլաքը դրված է ուղիղ գծով, դեպի աջ ձախից շարժվելու համար։ Ցուցիչի քառակուսի կողմից յերևում է սպիտակ կաթնագույն աջից դեպի ձախ թեքված անկյունագիծ (Նկ. 45)։



Նկ. 45

Ցերեկով և գիշերով



Նկ. 46

գ) Սլաքը դրված է շարժման համար ձախ կորույթով, ցուցիչի քառակուսի կողմից յերևում է սպիտակ-կաթնագույն անկյուն, վորը անցքով ուղղված է դեպի ձախ (Նկ. 46)։

Ցերեկով և գիշերով



Նկ. 47

դ) Սլաքը դրված է շարժման համար աջ կողույթով։ Ցուցիչի քառակուսի կողմից յերևում է, անցքով դեպի աջ ուղղված, սպիտակ-կաթնագույն անկյուն (նկ. 47)։

§ 43. Չլուսավորված սլաքային ցուցիչները ցույց են տալիս.

ա) Վոր սլաքը դրված է ուղիղ գծով։ Սլաքանման, չլուսավորված ցուցիչը իր կողով կանգնած է գծի յերկարությամբ (նկ. 48)։

Ցերեկով և գիշերով



Նկ. 48



բ) Սլաքը դրված է դեպի թեքված գիծը։ Սլաքային ցուցիչի սպիտակ հունի վրա (на белом фоне) յերևում է թեքված գծի կողմն ուղղված սև նետ (стрела)—(նկ. 49)։

Ցերեկով և գիշերով



Նկ. 49

## ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՍՅՈՒՆԻԿՆԵՐ

§ 44. Սահմանային սյունիկները ցույց են տալիս այն տեղը, վորից այն կողմը չի կարելի շարժակազմ տեղավորել: Սահմանային սյունիկները դրված են գծերի միջև այն տեղերում, ուր կցվող ռելսերի արտաքին կողերի միջև տարածությունը 2,13 մ-ից պակաս չե (Նկ. 50):




Նկ. 50



## ՈՒՂԵԿԱՊԻ ՑՈՒՑԻՉՆԵՐ

§ 45. Ուղեկապի ցուցիչները (заградители) ցույց են տալիս, վոր յեթե՝

ա) «Գիծը փակված ե», ապա ցուցիչի վրա ցերեկով յերևում ե սպիտակ շրջան, մեջտեղում հորիզոնական սև շերտ, գիշերը՝ սպիտակ-կաթնագույն կրակ, մեջտեղում նույն սև շերտը (Նկ. 51):

Ցերեկով և գիշերով



Նկ. 51

բ) «Ուղեկապը գծից հանված է»։ Ցերեկով յերևում է սպիտակ շրջան, ուղղահայաց սև շերտով. գիշերը՝ սպիտակ-կաթնագույն կրակ, նույն սև շերտով (Նկ. 52)։

Ցերեկով և գիշերով



Նկ. 52

Ցերեկով և գիշերով



Նկ. 53

§ 46. Դիմհարների (упор) վրա գտնվող ուղեկապի (заградитель пути) ցուցիչը զետեղվում է դիմհարի ձողի նեցուկից դեպի աջ (Նկ. 53)։



## ՋՐԱՄԱՏՈՒՅՑ ԾՈՐԱԿՆԵՐԻ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ

§ 47. Ջրամատույց ծորակի ցուցիչը լապտեր է, վորը գիշերը յերկու կողմով էլ ցույց է տալիս կարմիր կրակ, յեթե միայն նրա թևը շուռ է տրված դեպի գիծը՝ ընդլայնական կերպով։ Ցերեկով յերևում է նրա թևը, վորը ներկված է լինում կարմիր գույնով (Նկ. 54)։ Ազդանշանը՝ «Կանգ առ»։

Ցերեկով Գիշերով



Նկ. 54

Յեթե թևը դրված է գծի ուղղությամբ, ապա գիշերով, յերկու կողմից էլ յերևում է սպիտակ կրակ։

Գլուխ 5.

## ՄԱՆՑՈՎՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻՋՈՑԻՆ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐԸ

§ 48. Մանյովրի թույլատրման կամ արգելման համար իբրև ազդարարում՝ գործադրվում են լուսաֆորներ, մանյովրային վահաններ, ձեռքի և ձայնական ազդանշաններ։

Մանյովրային լուսաֆորները տալիս են հետևյալ ազդանշանները.

ա) Մի սպիտակ լուսնեգույն կրակ—«Մանյովրների կատարումը թույլատրվում է» (Նկ. 55)։

Գիշերով և ցերեկով



Նկ.

Գիշերով և ցերեկով



Նկ. 56

բ) Մի հատ կապույտ կրակ—մանյովրների կատարումը արգելվում է (Նկ. 56)։



Էլեկտրական կենտրոնացումով կայարաններում մանյովրների համար կարող են սահմանվել արագության յերկու աստիճան։ Այս դեպքում բարձրացրած արագություն թույլատրելիս լուսաֆորի վրա վառվում է յերկու լուսնեգույն կրակ։

§ 49. Բլրային (горочный) լուսաֆորներով տրվում են հետևյալ ազդանշանները.

Դեղին—«Առաջ, դեպի բլուրը նվազեցրած արագությամբ»—«Կանգ առ»։

«Վագոնները բլուրից (с горки) յետ քաշել դեպի ընդունիչ գծերը» ազդանշանը տալու համար լուսաֆորի վրա գետեղվում է տառով և կարմիր վառվող կրակով ցուցիչ-ինդիկատոր։

Բլրի ստորոտի գծերում ազդարարման համար գործադրվում են սովորական մանյովրային լուսաֆորներ։

§ 50. Մանյովրային վահաններով, նայած սրահային գծերի դասավորմանը, մի կամ յերկու կողմով ևս տրվում են հետևյալ ազդանշանները.

ա) «Մանյովրների կատարումը թույլատրվում է»—ցերեկը՝ վահանը իր պոչով դրված է գծի յերկարությամբ կամ հորիզոնական, գիշերով՝ յերևում է լուսնեգույն կրակ։

Ցերեկով　　　　　Գիշերով



Նկ. 57

բ) «Մանյովրների կատարումը արգելվում է» —ցերեկը՝ շախմատի ձևով ներկած տախտակը դրվում է գծի լայնքով, գիշերն յերևվում է կապույտ կրակ։

Ցերեկով　　　　　Գիշերով



Նկ. 58



## ՁԵՌՔԻ ՅԵՎ ՁԱՅՆԱԿԱՆ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐԸ ՄԱՆՅՈՎՐԻ ԺԱՄԱՆԱԿ

§ 51. Մանյովրի ժամանակ տրվում են ձեռքի և ձայնական ազդանշանները.

ա) «Շոգեշարժը, ելեկտրոշարժը և ջերմաշարժը տեղաշարժել ղեկավարումով դեպի առաջ» ազդանշանը, տրվում է, գլխի վրա դեղին, բաց դրոշակ ճոճելով, իսկ գիշերը՝ գլխի վրա դեղին կամ սպիտակ կրակով լապտեր շարժելով (Նկ. 59), կամ ձեռքի սուլիչով ու շեփորով տալիս են յերկար հնչյուն։

Ցերեկով　　　　　Գիշերով



Նկ. 59

բ) «Շոգեշարժի, էլեկտրոշարժի կամ ջերմաքարշի տեղաշարժումը ղեկավարումով դեպի յետ» ազդանշանը տրվում է ցերեկը դեղին բացված դրոշակը վոտքերի մոտ ճոճելով, իսկ գիշերը — դեղին կամ սպիտակ կրակով լապտերը ճոճելով (Նկ. 60), նույն ազդանշանը տրվում է նայեվ ձեռքի սուլիչի կամ շեփորի յերկու յերկար հնչյունով։

Ցերեկով Գիշերով



Նկ. 60

գ) «Հանդարտ» ազդանշանը տրվում է. ցերեկը՝ դեղին բացված դրոշակը վերեվ ներքեվ դանդաղորեն ճոճելով, իսկ գիշերը՝ ձեռքի լապտերի դեղին կամ սպիտակ կրակը ճոճելով (Նկ. 61), նույն ազդանշանը տրվում է ձեռքի սուլիչի կամ շեփորի յերկու կարճ սուլոցով (Նկ. 61)։

Ցերեկով Գիշերով



Նկ. 61

դ) «Կանգ առ» ազդանշանը տրվում է. ցերեկը՝ կարմիր կամ դեղին բացված դրոշակը պտուտագիծ շարժելով. իսկ գիշերը՝ ամեն գույնի լապտերի պտուտագիծ շարժումով (նկ. 62)։ Նույն ազդանշանը տրվում է նաև ձեռքի սուլիչի կամ շեփորի երեք կարճ սուլոցով։

Ցերեկով Գիշերով



Նկ. 62

§ 52. Եթե դրոշակ չկա, մանյովրների ընթացքում ցերեկվա բոլոր ազդանշանները կարող են տրվել ձեռքի համապատասխան շարժումով։

§ 53. Մանյովրի միջոցին տրվող բոլոր ազդանշանները պետք է կրկնվեն լոկոմոտիվի սուլոցներով, որոնք հաստատում են թե ազդանշանները ընդունվել են ի կատարում։



§ 54. Սլաքավարին սլաքները այս կամ այն գծով զետեղելու առաջարկը գնացք կազմողները և լոկոմոտիվի մեքենավարները տալիս են սուլոցների պայմանական ձևերով, ի նկատի ունենալով կայարանային գծերի համարները։

Սուլոցների պայմանական ձևերի ցուցակը մշակում են ճանապարհները և ցույց է տրվում տեխնիկա-կարգադրական ակտի և յուրաքանչյուր կայարանի համար այդ ակտից կատարած քաղվածքի մեջ։

Գլուխ 6.

# ԳՆԱՑՔԱՅԻՆ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐ

Գնացքի գլուխն ու պոչը շարժման միջոցին նշվում է.

Յերբ գնացքը շարժվում է միուղի գծամասում և յերկուղի գծամասում ուղիղ գծով։

§ 55. Գնացքի գըլխին շոգեշարժ է.

Յերեկը՝ շոգեշարժի կամ տենդերի ձողի վրայի յերկու լապտերները ծառայում են վորպես գնացքի գլխի պայմանական նշան (Նկ. 63)։

Յերեկով



Նկ. 63

Գնացքի պոչին վագոն է.

Յերեկը՝ նշվում է լծասարքի մոտ գտնվող կարմիր սկավառակով բացված կարմիր դրոշակով և վերջի վագոնի կողքի կարթերից կախված յերկու լապտերով (Նկ. 65)։

Գիշերով



Նկ. 65



Շոգեշարժը գնացքի գլխին է. Գիշերը նշվում է բուֆերային լապտերների յերկու սպիտակ կրակով (Նկ. 64)։

Յերեկով



Նկ. 64

Գնացքի պոչին վագոն է. Գիշերը՝ 3 լապտեր, վորոնք դեպի յետ ցույց են տալիս 3 կարմիր կրակ (Նկ. 66)։

Կողքի լապտերները դեպի գնացքի գլուխը ցույց են տալիս վերահսկման սպիտակ կրակ։

Գիշերով



Նկ. 66

§ 56. Գնացքի գլխին վագոն է։

Ցերեկով 3 լապտեր (յերկուսը կողքից, իսկ յերրորդը բուֆերի ձողի մոտ)։

Ցերեկով



Նկ. 67

Գնացքի պոչում շոգեշարժ է։

Ցերեկով տենդերի կամ շոգեշարժի բուֆերի ձողի ձախ կողմից բացված կարմիր դրոշակ (Նկ. 69)։

Գիշերով



Նկ. 69



Գնացքի գլխին վագոն է.

Գիշերը 3 սպիտակ կրակ։ Կողքի լապտերները դեպի գնացքի պոչի կողմը գիշերով ցույց են տալիս վերահսկման սպիտակ կրակ (Նկ. 68)։

Գիշերով



Նկ. 68

Գնացքի պոչին շոգեշարժ է.

Գիշերը ձախ բուֆերի մոտ կարմիր կրակով լապտեր (Նկ. 70)։

Գիշերով



Նկ. 70

§ 57. Յերբ վերջին արգելակավոր վագոնից հետո դրվում են անարգելակավոր վագոններ, կողքի լապտերները դրվում են արգելակավոր վագոնի վրա, իսկ բուֆերային լապտերը, կար-

միր մկամառակը կամ բացված դրոշակը պոչային անարգելակավոր վագոնի լծասարքի կարթի վրա։

§ 58. Ցեթե շոգեշարժը կահավորված է լուսարձակով (прожектор) կամ ամերիկական լապտերով, ապա անկախ այն բանից, թե շոգեշարժը ինչ գնացքի հետ է ընթանում, նրա գ ուխը նշվում է ցերեկը 3 լապտերով, գիշերը 3 սպիտակ կրակներով։

§ 59, Մոտորավագոնային էլեկտրոգնացքի գլուխը գիշերով նշվում է լուսարձակի սպիտակ կրակով, որը գտնվում է վագոնի ճակատի պատի միջին մասից վերև։

§ 60. Մոտորավագոնային էլեկտրոգնացքի պոչը ցերեկով և գիշերով նշվում է վագոնի ցածում, շարժման ուղղության աջակողմից գտնվող մի հատ կարմիր կրակով։



## ՑԵՐԲ ՄԻՈՒՂԻ ԳԾԱՄԱՍՈՒՄ, ԿԱՄ ՑԵՐԿՈՒՂԻ ԳԾԱՄԱՍՈՒՄ ՈՒՂԻՂ ԳԾՈՎ ՇԱՐԺՎՈՒՄ Է ՄԵՆՑԵՐԹ ՇՈԳԵՇԱՐԺԸ

§ 61. Ցերեկը, առջևից շարժման ուղղությամբ, տենդերի կամ շոգեշարժի բուֆերային ձողի մոտ ունենում է չերկու լապտեր (Նկ. 71)։

Ցերեկը, յետևից, շարժման ուղղությամբ, տենդերի կամ շոգեշարժի բուֆերային ձողի մոտ, ձախ կողմից՝ կախվում է բացված դրոշակ՝ (Նկ. 73)։

Ցերեկով




Նկ. 71

Ցերեկով



Նկ. 73

Գիշերը, լապտերի մի հատ սպիտակ կըրակ, շարժման ուղղության՝ աջ կողմից (Նկ. 72)։

Գիշերով



Նկ. 72

Գիշերը, յետևից շարժման ուղղության ձախ կողմից կարմիր կրակ (Նկ. 74)։

Գիշերով



Նկ. 74



## ՑԵՐԲ ԳՆԱՑՔԸ ՇԱՐԺՎՈՒՄ Է ՎՈՋ ՈՒՂԻՂ ԳԸԾՈՎ ՑԵՐԿՈՒՂԻ ԳԾԱՄԱՍՈՒՄ

§ 62. Շոգեշարժը գնացքի գլխին է։

Ցերեկով տենդերի կամ շոգեշարժի բուֆերային ձողի մոտ, ձախ կողմում կախվում է կարմիր դրոշակ, իսկ աջ կողմից չլուսավորված լապտեր (Նկ. 75)։

Ցերեկով



Նկ. 75

Գնացքի պոչին վագոն է։

Ցերեկը լծասարքի կարթի մոտ կարմիր սկավառակ կամ կարմիր բացված դրոշակ և վերջին վագոնի կողքի կարթերից յերկու լապտեր (Նկ. 77)։

Ցերեկով



Նկ. 77

Գնացքի գլխին շոգեշարժ է։
Գիշերով նույն կողմից կարմիր լապտերի կրակ, իսկ աջ կողմից լապտերի սպիտակ կրակ (Նկ. 76)։

Գիշերով



Նկ. 76

Գնացքի պոչին վագոն է
Գիշերով բուֆերի մոտ ու ձախ կողմի լապտերի մեջ կարմիր կրակներ, իսկ աջ կողմի լապտերի մեջ սպիտակ կրակ (Նկ 78)։

Գիշերով



Նկ. 78

Կողքի լապտերները գնացքի գլխի կողմը ցույց են տալիս մերահսկման սպիտակ ճրագներ։

## ՅԵՐԲ ՄԵՆՅԵՐԹ ԸՆԹԱՑՈՂ ԳՆԱՑՔԸ ՇԱՐԺՎՈՒՄ Է ՅԵՐԿՈՒՂԻ ԳԾԱՄԱՍՈՒՄ ՎՈՉ ՈՒՂԻՂ ԳԾՈՎ

§ 63. Շոգեշարժի գլխին։
Շոգեշարժի կամ տենդերի բուֆերային ձողի ձախ կողմից՝ ցերեկը բացված կարմիր դրոշակ (Նկ. 79)։

Ցերեկով



Նկ. 79

Շոգեշարժի պոչին։
Ցերեկով շոգեշարժի կամ տենդերի բուֆերային ձողի մոտ, ձախ կողմից բացված կարմիր դրոշակ (Նկ. 81)։

Ցերեկով



Նկ. 81

Շոգեշարժի գլխին. Գիշերով շարժման ուղղության ձախ կողմից լապտերի կարմիր կրակ (նկ 80)։

Շոգեշարժի պոչին. Գիշերով Ձախ բուֆերի մոտ կարմիր կրակ և աջ բուֆերի մոտ բուֆերային կամ ձեռքի լապտեր սպիտակ կրակ։

Գիշերով



Նկ. 80

Գիշերով



Նկ. 82

§ 64. Վաղուրդից յերկուղի գծամասով նորից առաքման կայարանը վերադարձող հրիչի վրա դրվում են վոչ ուղիղ գծով յերթի ազդանշաններ։

§ 65. Վոչ հանովի տիպի ավտոդրեզինները նշվում են այն կարգով, վորը սահմանված է մենյերթ շոգեշարժի համար։



## ԸՆԴԵՐԹ ԸՆԹԱՑՈՂ ԳՆԱՑՔԻ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐԸ

§ 66. Գծի աշխատավորներին հաղորդելու համար, վոր գնացքներից մեկն ընթանում է մյուսի յետևից ընդյերթ ժամանակի անջատումով, գործադրվում են հետևյալ ազդանշանները.

Առաջին գնացքի կամ մենյերթ շոգեշարժի գլխին, ցերեկը բուֆերային ձողի աջ կողմից դեղին բացված դրոշակ կամ սկավառակ, իսկ ձախից չլուսավորված լապտեր (նկ. 83)։

Առաջին գնացքի պոչին, գնացքի պոչի ազդանշաններին հավելվում է (նկ. 65) աջ կողքի լապտերի մոտ դեղին դրոշակ (նկ. 84)։

Ցերեկով



Նկ. 83

Ցերեկով



Նկ. 84

Մանյովրի շոգեշարժի վրա, ցերեկով, յետևի աջ բուֆերի վրա կախվում է դեղին բացված դրոշակ, իսկ ձախ կողմից կարմիր բացված դրոշակ։

§ 67. Վագոնրդից գնացքը մասերով հեռացնելիս՝ յուրաքանչյուր հեռացվող մասի պոչի վագոնը (բացի վերջինից) նշվում է դեղին կրակով (նկ. 85)։

Ցերեկով Գիշերով



Նկ. 85

Վերջին հեռացվող մասը նշվում է սովորական կարգով։

§ 68. Մի գնացք մյուս գնացքին առաջհատելիս, վորն ընթանում է (այս կամ այն կողմից)



հարևան գծով, առաջնատվող գնացքի կողքի վերին լապտերի այս գծին ուղղված կարմիր կրակը փոխարինվում է սպիտակ կրակով։ Առաջնատվող գնացքի մեքենավարին յերևում է կարմիր կրակ (նկ. 86)։

Գիշերով



Նկ. 86

§ 69. Ձնամաքրիչները ընթանալիս՝ նշվում են.

ա) Յեթե գնացքի գլխին շոգեշարժ է, ցերեկը 2 դեղին դրոշակ, իսկ գիշերը բուֆերային ձողի լապտերների մեջ յերկու դեղին կրակ (նկ. 87)։

Ցերեկով — Գիշերով



Նկ 87

բ) Յեթե շոգեշարժը պոչին է, ապա ցերեկը ձնամաքրիչի վրա յերկու դեղին դրոշակ է լինում, իսկ գիշերը կողքի լապտերների մեջ, յերկու դեղին կրակ (նկ. 88)։

Ցերեկով — Գիշերով



Նկ. 88

Ձնամաքրիչի պոչը նշվում է իբրև մենյերթ ընթացող շոգեշարժ։

§ 70. Շոգեշարժը մանյովրի ժամանակ գիշերով, բուֆերային ձողերի թե առջեվը և թե յետեվինը, մեքենավարի կողմից ունենում է մի-մի հատ սպիտակ կրակ։

§ 71. Շարժվող հանովի դրեզինների և գծային վագոնիկների ազդանշանները.

Հանովի դրեզիններն և գծային վագոնիկները վազուղում գտնվելիս պետք է ունենան.

ա) Միուղի գծամասերում յերկուղի գծամասի վոչ ուղիղ գծով շարժվելիս, ցերեկը՝ յերկու յերեսով ևս կարմիր գույնի վահան կամ ձողի վրա կարմիր բացված դրոշակ, իսկ գիշերով ձողի վրա պնդացրած առաջից ու յետևից յերևացող կարմիր կրակ.

բ) Յերկուղի գծամասերում ուղիղ գծով ընթանալիս՝ ցերեկով—առջևի կողմից սպիտակ, իսկ յետևի կողմից կարմիր ներկած վահան և գիշերով՝ ձողի վրա պնդացրած լապտերի առջևից սպիտակ, իսկ յետևից կարմիր կրակ։

Գծային վագոնիկները վազուղում յերկու կողմից ևս 800 մետր տարածությամբ պետք է պատըսպարված լինեն տեղափոխիկ կարմիր ազդանշաններով, վորոնք միաժամանակ տեղափոխվում են վագոնիկի շարժման հետ միաժամանակ։

Յերկաթգծի այն աշխատավորները, վորոնք յերկու կողմից պատսպարում են վագոնիկները, ինչպես և վագոնիկի տեղափոխումը ղեկավարող աշխատավորը, բացի դրոշակներից և լապտերներից, պետք է անպայման ունենան նաև շեփորներ ու ճայթուկներ, վորպեսզի վագոնիկների



կողմը կարողանան գնացքի մոտեցման մասին ազդանշան տալ, իսկ գնացքի կողմը յեթե կպահանջվի կանգնույթի ազդանշաններ։

Յեթե յերկուղի գծամասում հարևան գծով ընթանում է հանդիպական գնացք, ապա վագոնիկը առջևի կողմից պատսպարող տեղափոխիկ ազդանշանը, մինչև գնացքի անցույթը հանվում է։

Գլուխ 7.

# ՁԱՅՆԱԿԱՆ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐ

§ 71. Ձայնական ազդանշանները տրվում են ձեռքի սուլիչով, լոկոմոտիվի սուլիչով և զանգերով

| Ազդանշան | Ազդանշանի պահանջը | Ո՞վ է տալիս |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| Երեք կարճ ● ● ● | «Կանգ առ» | Տալիս են գնացքային ջոկատը կամ գնացքների շարժումը սպասարկող կայարանային աշխատավորները, ինչպես և ամեն մի աշխատավոր այն դեպքերում, որոնք պարզապես սպառնում են անվտանգ շարժմանը և կամ մարդկանց կյանքին։ |
| Մի յերկար ▬ | Գնացքի մեկնում | ա) Գլխավոր կոնդուկտորը։<br>բ) Պատասխանում է գնացքը տանող լոկոմոտիվի մեքենավարը։ Երկրորդ լոկոմոտիվի մեքենավարը, յերկլուծ քարշի միջոցին ազդանշանը կրկնում է։ |

| Ազդանշան | Ազդանշանի պահանջը | Ո՛վ է տալիս |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| Երեք յերկար ▬ ▬ ▬ | Կոնդուկտորներից պահանջվում է արգելակում։ | Գնացքը տանող լոկոմոտիվի մեքենավարը։ Երկրորդ լոկոմոտիվի մեքենավարը, յերկլուծ քարշի դեպքում, կրկնում է։ |
| Երկու յերկար ▬ ▬ | Կոնդուկտորներից պահանջվում է արգելակները բացել։ | Տանող լոկոմոտիվի մեքենավարը։ Երկրորդ լոկոմոտիվի մեքենավարը յերկլուծ քարշի դեպքում՝ կրկնում է։ |
| **Երբ կրկնակի լուծով է** | | |
| Մի կարճ ● | Երկրորդ լոկոմոտիվի մեքենավարից պահանջվում է շոգու մուծումը դադարեցնել կամ յեռքը նվազեցնել։ | Գնացքը տանող լոկոմոտիվի մեքենավարը։ Երկրորդ լոկոմոտիվի մեքենավարը կրկնում է։ |
| Երկու կարճ ● ● | Երկրորդ լոկոմոտիվի մեքենավարից պահանջվում է բացել կամ ուժեղացնել շոգու մուծումը, կամ արտադրությունը մեծացնել։ | Նույնպես։ |

| Ազդանշան | Ազդանշանի պահանջը | Ով է տալիս |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| **Յերբ հրիչ լոկոմոտիվով** | | |
| Յերկու կարճ։ ● ● | Պահանջվում է սկսել հրումը։ | Գնացքը տանող լոկոմոտիվի մեքենավարը։ Հրիչ լոկոմոտիվի մեքենավարը կրկնում է։ |
| Մի կարճ։ ● | Պահանջվում է հրումը ընդհատել, բայց գնացքից յետ չմնալ։ | Գնացքը տանող լոկոմոտիվի մեքենավարը։ Հրիչ լոկոմոտիվի մեքենավարը կրկնում է։ |
| Չորս կարճ։ ● ● ● ● | Հայտնվում է, վոր հրման այլևս կարիք չկա և հնարավոր է վերադառնալ ուղարկման կայարանը։ | Գնացքը տանող լոկոմոտիվի մեքենավարը։ Հրիչ լոկոմոտիվի մեքենավարը կրկնում է։ Գնացքը կրկնակի լուծով ընթանալիս յերկրորդ լոկոմոտիվի մեքենավարը կրկնում է անմիջապես առջևինից տված ազդանշանները։ |

## ԳՆԱՑՔԻ ԽԶՄԱՆ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐԸ

§ 73. Գնացքի խզման ազդանշանները տալիս են կոնդուկտորական ջոկատը, գծի աշխատավորները հետևյալ կարգով. ընդմիջումներով կարճ ժամանակամիջոցներից հետո, ցերեկը, մերթ յերևում է և մերթ հորիզոնական գծով ծածկվում է դեղին բացված դրոշակ, իսկ գիշերը մերթ ընդ մերթ յերևում են ձեռքի լապտերի դեղին և սպիտակ կրակները։ Այս ազդանշանները տրվում են գնացքի գլխի և թե պոչի կողմը այնքան, մինչև վոր ազդանշանը կնկատեն ամբողջ կոնդուկտորական ջոկատն ու լոկոմոտիվի մեքենավարը և մինչև վոր վերջինս, ըստ հետևյալ սխեմայի, լոկոմոտիվի սուլոցով կտա մի կարճ, մի յերկար և մի կարճ պատասխան ազդանշան (նկ. 89)։



Նկ. 89։

Մեքենավարը գծանցույթներին, տնակներին, կազարմաներին մոտենալիս՝ կրկնում է խզման ազդանշանը, վորպեսզի հրավիրի գծի այն աշխատավորների ուշադրությունը, վորոնք պարտավոր են գնացքի պոչի մասը կանգնեցնելու համար միջոցներ ձեռք առնել։ Իսկ կայարանին մոտենալիս մեքենավարը պարտավոր է անընդհատ կրկնել, կայարանի աշխատավորների ուշադրությու-

նը հրավիրելու համար, տալ վերը ցույց տված ազդանշանը, վորպեսզի նրանք գնացքի գլխի և պոչի պոկված մասերը զանազան գծեր ընդունելու միջոցներ ձեռք առնեն։

Լրիվ ավտոմատիկ արգելակումով ընթացող գնացքը խզվելիս, գնացքի ջոկատը, կանգնույթից հետո, միացնում է յերկու մասն էլ։ Յեթե անհնարին է գնացքը միացնել, վազուրդում մնացած մասը պատսպարվում է և գնացքը դուրս է բերվում մաս-առ-մաս։

## ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐ

§ 74. Գնացքի շարժման միջոցին տեղեկացման ազդանշանները տրվում են.

ա) Լոկոմոտիվի մի յերկար սուլոցով, յերբ գնացքը մոտենում է կայարանին, «սուլոց» մակագրումով ցուցիչներին, կորույթներին, տոննելներին, գծյերթներին, տեղափոխիկ ազդանշաններին, դրեզիններին, վագոնիկներին, ինչպես և գծում գտնվող մարդկանց մոտենալիս և ճանապարհի պետի կողմից ցույց տված այլ դեպքերում։

Ուժեղ մառախուղի, բուքի և անձրևի միջոցին այս ազդանշանը ավելի հաճախ է տրվում։

Լոկոմոտիվների սուլոցները կարող են փոխարինել զանգերով ճանապարհի այն մասերում,



վորոնք անցնում են փողոցներով և քաղաքի առափնյա տեղերով.

բ) Գնացքի մոտեցման ազդանշանը շեփորով վազուրդում տալիս են գծային պահակները կամ վագոնիկն ուղեկցող աշխատավորները, իսկ կայարաններում՝ մուտքի սլաքների սլաքավարները, ըստ վորում կենտ գնացքի մոտեցումը տեղեկացնում են մեկ, իսկ զույգ գնացքինը՝ շեփորի յերկու յերկար հնչյունով։

գ) Ճամբորդական գնացքների և մարդիկ տանող գնացքների առաջիկա մեկնումը, բացի մերձքաղաքային գնացքներից, հաղորդվում է.

5 րոպեյից ավելի կանգնույթի դեպքում զանգի մի զարկով, գնացքի մեկնումից 5 րոպե առաջ։

5 րոպեյից պակաս, բայց 2 րոպեյից ավելի կանգնույթի դեպքում, զանգի մի զարկով, գնացքը մոտենալիս։

Բոլոր դեպքերում, ուղևորներին 2 րոպե առաջ, գնացքի մեկնման մասին զանգի յերկու զարկով տեղեկություն է տրվում։ Յեթե կանգնույթը յերկու րոպեյից պակաս է, ապա գնացքը մոտենալիս տրվում է յերկու զարկ։

Բարձրախոս տեղեկատու սարքավորում ունեցող կայարաններում, ճանապարհի պետի կարգադրությամբ զանգահարումը կարող է վերացվել և փոխարինվել բարձրախոսային տեղեկացումներով։

Գլուխ 8.

# ՏԱԳՆԱՊԻ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐ ՅԵՎ ՀԱՏՈՒԿ ՑՈՒՑԻՉՆԵՐ

§ 75. Տագնապի ազդանշաններ տալու համար ծառայում են՝ գործարանների, ուժակայանների և լոկոմոտիվների սուլիչները, շեփորները և զինվորական ազդանշանային փողերը, կայարանային զանգերը, կախած բուֆերային ափսեներին և ռելսի կտորին հարվածելը։

1. Ընդհանուր տագնապի ազդանշանները տրըվում են խմբովին, մի յերկար և յերեք կարճ ձայներից՝ հետևյալ սխեմով



և այս դեպքերում.

ա) յերբ գծում յերևան է բերվում անվտանգ չարժանը սպառնացող խախտում.

բ) յերբ չարամիտ հարձակում են գործում գընացքի կամ ճանապարհի աշխատավորի կամ գույքի վրա.

գ) յերբ գնացքը կանգ է առնում ձնե հյուսի մեջ, կամ գնացքը խորտակվում է և ընդհանրապես այն դեպքերում, յերբ ողնություն է պահանջվում։

2. Հրդեհի տագնապային ազդանշանը տրվում է մի յերկար, յերկու կարճ հնչյուններով և այսպիսի սխեմով։



Այս ազդանշանները կարող է տալ յերկաթգծի ամեն մի աշխատավոր, այդպիսի ազդանշան տալու բոլոր անհրաժեշտ դեպքերում։

3. «ՈՏ» (օդային տագնապ) ազդանշանը տըրվում է 3 րոպե անընդհատ տրվող մի շարք կարճ հնչյուններով և հետևյալ սխեմայով.



Օդային տագնապի ազդանշանը տրվում է.

ա) Կայարաններում՝ կայարանի պետի կարգադրությամբ և կամ նրա կողմից լիազորված անձանց միջոցով.

բ) Վագոնորդների վրա՝ զինվորական գնացքներում ուղեկորվող զինվորական մասից ընտրված գլխողի կարգադրությամբ, իսկ մյուս այլ գնացքներում՝ գլխավոր կոնդուկտորի կարգադրությամբ։

Ծանոթություն.—«ՈՏ» ազդանշանը տալուց հետո արգելվում է հրդեհի և ընդհանուր տագնապի ազդանշաններ տալ այնքան ժամանակ, մինչև վոր կտրվի օդային տագնապի ավարտման ազդանշանը։

4. «Քիմիական վտանգի» ազդանշանը տրըվում է.

ա) Վագուրդում՝ շոգեշարժի սուլոցով և այսպիսի սխեմով.



3 րոպե տևողությամբ.

բ) Կայարաններում՝ ռելսի կտորին, բուֆերային ափսեյին զարկելով և այլն, նույն սխեմայով, 1—2 րոպե տևողությամբ և պարբերական կրկնումներով։

Կայարաններում «քիմիական վտանգի» ազդանշանը տալիս են դրա համար հատուկ լիազորված անձինք և յերկաթ գծի այն աշխատավորները, վորոնց վրա պաշտոնեական հրահանգներով այդպիսի ազդանշաններ տալու պարտականություն և դրվում։

5. Ոդային և քիմիական տագնապի ավարտման ազդանշանը տրվում է յերկար ու ձիգ հնչյունով 3 րոպե, հետևյալ սխեմայով.



Ոդային տագնապի ավարտման ազդանշանը տրվում է.

ա) Կայարաններում՝ կայարանի պետի կարգադրությամբ կամ նրա կողմից լիազոր անձի միջոցով.



բ) Վագուրդների վրա—զինվորական մարդկային գնացքներում եշելոնի պետի կարգադրությամբ, իսկ մյուս այլ գնացքներում՝ գլխավոր կոնդուկտորի կարգադրությամբ։

Յերկարաձիգ հնչյունների սխեմայով տրվելիք բոլոր ձայնական ազդանշանները զարկերով տալու դեպքում, պետք է տրվեն վերաձայնումով (перезвон), այսինքն իրար յետևից անընդհատ հաջորդող զարկերով, մինչ կարճ հնչյունները տրվում են մեջ-ընդ-մեջ, անհրաժեշտ կարճ հընչյունների թվով։

## ՀԱՏՈՒԿ ՑՈՒՑԻՉՆԵՐ

§ 76. Գծամասերում «ԹՆ»-ով (թունավոր նյութերով) վարակված տեղերը նշելու համար, ուր առանց անհատական պաշտպանողական միջոցների (հակագազերի, պաշտպանողական հագուստի) մուտք գործելն արգելվում է, դրվում են քիմիական վտանգ մատնանշող ցուցիչներ։

Վագուրդում այս ցուցիչները դրվում են հողապաստառի պռունգի (առի, на бровке) վրա, մեքենավարի կողմից, վարակման տեղից 200 մետր հեռավորությամբ։ Վարակված գծամասը մուտք գործելուց առաջ, մեքենավարը պարտավոր է տալ քիմիական վտանգի ազդանշան և առաջ ընթանալ առանց արագությունը նվազեցնելու.

«Քիմիական վտանգի» տեղափոխիկ ցուցիչները

ունեն սպիտակ հուն՝ և մակագրությամբ, վա-րոնց վրա լինում է նաև նկարված կառափ (череп) (Նկ. 90)։

Ցերեկով Գիշերով



Նկ. 90

§ 77· «ԹՆ» քիմիական վարակման յենթարկ-ված գնացքի գլխին ու պոչին դրվում են, բացի գնացքային ազդանշաններից, նաև հատուկ ցու-ցիչներ (Նկ. 91)։



Ցերեկով Գիշերով



Նկ. 91

Կտրման գիծը

# ՊԱՐՏԱՎՈՐՈՒՄ

Օգտագործման համար ինձ տրված Ազդարարման Հրահանգն ուսումնասիրել եմ և ստույգ կերպով գե-տեմ ազդանշաններով օգտվելու ամբողջ հրահանգն ու կարգը։

**Պարտավորվում եմ.**

ա) Առանց վորևէ առարկման կատարել ԽՍՀ Միու-թյան յերկաթգծերում գործադրվող ազդարարման հրահանգը։

բ) Վերադարձնել այդ հրահանգը աշխատանքս թող-նելու միջոցին, կամ այդ հրահանգն ինձ հանձնող պետի պահանջով։

Ազգ. անուն, հայրանուն ....................................................

..............................................................................................

Աշխատանքի վայրը ....................................................

Պաշտոնը ..................................................................

Ստորագրություն ....................................................

Թիվը ............................................

ՀՍՍՌ-Арм ССР

# ՎՐԻՊԱԿՆԵՐ

| Երես | Տող | | Տպված է | Պետք է լինի |
|---|---|---|---|---|
| 38 | Վերևից | 4-րդ | գիշերով | ցերեկով |
| » | » | » | ցերեկով | գիշերով |
| 67 | Ներքևից | 4-րդ | վագոնին | վագոնից |
| 85 | » | 6-րդ | յեա | յեա |
| 86 | » | » | այ | այլ |
| 89 | » | 10-րդ | գլնվորական | գինվորական |

ՀՀ Ազգային գրադարան
NL0298232

2 Гь

24.106

ИНСТРУКЦИЯ

**ПО СИГНАЛИЗАЦИИ**

**на железных дорогах СССР**

Издание Закжелдора